կիչ*), Նախիջեւանը՝ 2599, իսկ Օրդուբաթը՝ 3444 բնակիչ:

V

Ասել է, ուրեմն, ռուսական տիրապետութեան նախօրեակին Այրարատեան Հայաստանում եւ կամ ռուսական վարչական բաժանումով, «Հայկական Երջանի» համապատասխան հողամասում հայերը ներկայացրել են մի չընչին թիւ միայն — 25,151 հոգի: Եթէ ուրեմն, միւս կողմից, նոյն այդ շրջանի 1838-ին վերաբերեալ գումարից, 164,500-ից, հանելու լինինք Պարսկաստանից (35,500 շունչ) եւ Տաճկաստանից (21,666 շունչ) ներգաղթածներին (ընդամէնը 57,226 շունչ), ապա ուրեմն կը ստացուի, որ ռուսական տիրապետութեան սկզբին Այրարատեան Հայաստանի բնակչութիւնը եղել է, կլոր հաշուով, 107 հազար, որից հայ՝ միմիայն 25,151, այսինքն՝ ¼-ից էլ պակաս:

Այստեղ մենք հաշուի չենք առնում մէկ տասնամեակի (1828–1838) ընթացքում առաջ եկած տարբերութիւնը եղած ազգաբնակութեան մէջ, հաշուի չենք առնում նաեւ արուեստական նուազումը մահմեդական տարրի, արտագաղթի ճամբով, որ անշուշտ մեծ թիւ է ներկայացրել:

Եթէ, դարձեալ, բնական աճման տարբերութիւնները հաշուելու չառնենք նաեւ հայութեան միւս հատուածների վերաբերմամբ, որոնք ապրում էին Անդրկովկասի միւս մասերում (Ղարաբաղ, Վրաստան եւայլն), եւ եթէ հայերի ամբողջական (295 հազար) թուից (1838-ին) հանելու լինինք 1828–1838-ին Պարսկաստանից եւ Տաճկաստանից ներգաղթած հայերի 57 հազարի հասնող թիւը, կը ստանանք 237 հազար:

Այս թուից Այրարատեան Հայաստանում ապրում էին ուրեմն, ռուսական տիրապետութեան նախօրեակին, հազիւ 25 հազար, ասել է՝ ժամանակի անդրկովկասեան հայութեան հազիւ 10–11%-ը: Բաղդատաբար չնչին տոկոս:

Ուրեմն եթէ ամփոփելու լինինք այդ տուեալները, կը տեսնենք որ՝ 1.) Ռուսական տիրապետութեան հետեւանքով Անդրկովկասի հայութեան թիւը 237 հազարից բարձրանում է 294 հազարի, Անդրկովկասեան կամ Այրարատեան Հայաստանի («Հայկական Երջան») բնակչութեան թիւն էլ՝ 107 հազարից 164 հազարի: 2. Ռուս տիրապետութիւնից անմիջապէս առաջ այդ հողամասի (Այրարատ. Հայաստան) հողի վրայ ապրող հայութեան թիւը աւելի քան եռապատկւում է, կազմելով արդէն բնակչութեան կէսը, մինչ առաջ հազիւ ¼-ն էր: 3. Ռուս տիրապետութիւնից առաջ նոյն այդ հողամասի վրայ նստած էր անդրկովկասեան հայութեան հազիւ մէկ ինն երորդը, իսկ նոյն տիրապետութիւնից 10 տարի անց՝ արդէն շուրջ ¼-ը:

Այս ամէնի հետ մոռնալու չէ հարկաւ, որ այդ փոփոխութիւնները տեղի էին ունեցել մի կողմից պարսկահայ եւ տաճկահայ տարրերի ներգաղթի եւ միւս կողմից էլ տեղական մահմեդական տարրի արտագաղթի հետեւանքով: Ե՛ւ մէկը, ե՛ւ միւսը խրախուսում էին ժամանակի ռուս իշխանութիւնները:

Որպէսզի 1838-ին վերաբերեալ թուական տեղեկութիւնները լրացրած լինինք, ասենք նաեւ, որ ժամանակակից Հայաստանը կամ «Հայկական Երջան» ասուածը ունէր ընդամէնը 18,620 քառակուսի վերստ (շուրջ 21,000 ք. քիլ.) տարածութիւն: «Հայկական Երջան»-ի մասեր էին կազմում, յայտնի է, 1. Երեւանի նախկին խանութիւնը եւ կամ, յետագայի բաժանումով, Երեւանի նահանգի Երեւան, Էջմիածին, Սուրմալու, Նոր-Բայազիդ եւ մասամբ Շարուր գաւառները, եւ 2. Նախիջեւանի խանութիւնը, այսինքն յետագայի համանուն գաւառը (Օրդուբաթն էլ մէջը) եւ Շարուրի մի մասը:

Մենք տեսանք ուրեմն մօտաւորապէս, թէ հայութիւնը ի՛նչ թիւ էր ներկայացնում Անդրկովկասի սահմաններում ընդհանրապէս եւ «Հայկական Երջան»-ում մասնաւորապէս՝ ռուսական տիրապետութիւնից անմիջապէս առաջ եւ 1838-ին, ինչպէս նաեւ 1897-ին, համառուսական վիճակագրութեան օրերին եւ, վերջապէս, 1926-ին:

Թուական տեղեկութիւններ ուրիշ տարեշրջանների մասին դժբախտաբար չունինք ձեռ-

*) Բոգենշտէդտ տալիս է 7–8 հազար թիւը: